



“ՓՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ՓԱՆ.” ՂՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԶ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՓԵՏՐՈՒԱՐ 1, 1897

ԹԻԻ 2



ՓԱՆԱՏԱԿԱՆ ԲԱԼԽԻՐ ՄԸ

Վայրենի ժողովուրդները սուրբաբար քաղաքակիրթ ազգերէն կ'առնեն օգտակար գաղափարներ և գործիքներ, բայց երբեմն հակառակն է համարիտ: Ամերիկայի պղնձագոյն բնիկները որոցմէ քանի մը հարիւր հազար միայն մնացած են, հնարած են բալխիւր մը որ դիւրաւ ծռող տախտակներու երկու ծայրերը վեր դարձրնելով կը շինուի, և հերմակ բնակիչները որոնք գրաւած են անոնց եր-

կիրներուն մեծ մասը, որդեգրեցին գաղափարը և բալխիւրին տուին «թոպոկկան» անունը որ Հնդկաց լեզուէն առնուած է: Ժամանակներ կան երբ թոպոկկանը շատ մը աւելի աղէկ կը ծառայէ քան հասարակ բալխիւրը: Երբ ձիւնը կակուղ է կամ երբ կը ծածկուի բարակ կեղևով մը, որ կը ձևանայ երբ ձիւնին երեսը կը հալի տաք ցերեկուան մը մէջ և յաջորդ գիշերը ցուրտ ըլլալուն պատճառաւ կը սառի, հասարակ բալխիւրին նեղ տախտակը

շատ անգամ կը խրի ձիւնին մէջ, մինչ թոպոկկանի տախտակին աւելի ընդարձակ մակերեսին վրայ ծանրութիւնը կը բաժնուի և թոպոկկանը մեծ արագութեամբ կը սահի ձիւնին վրայէն: Քանի մը տարիներ առաջ զբօսանքի այս տեսակը ֆանատայէ մտաւ Միացեալ Նահանգները: Բայց Միացեալ Նահանգներուն մէջ եթէ յարմար բլուրներ չկենան, տախտակներով հակուղիներ կը շինուին և ձիւնով կը ծածկուին: վանդակորմներ ալ կը շինուին

երկու կողմերը որպէս զի արկածներ չպատահին : Կը տեսնէք պատկերին մէջ որ թոպոկկանին ետևի ծայրը նրատող տղան կը ղեկավարէ, բայց երբ արագութիւնը սաստիկ ըլլայ, միշտ դիւրին չէ թոպոկկանը կառավարելը : Կրնաք երևակայել թէ երբեմն ի՞նչ պէս մեծ կ'ըլլայ արագութիւնը, վասն զի շուր կը թափուի ձիւնին վրայ որ ամբողջ սառոյցի կը փոխուի : Եւ հակառակ ամէն նախազգուշութիւններու, երբեմն արկածներ պատահած են . և կը կարծենք թէ հիմա այս գրասանքին այնքան շատ հետևողներ չկան Միացեալ Նահանգներուն մէջ, որքան կային քանի մը տարի առաջ :

ընկերակցութիւնը, և ուրիշներու հետ մրցելէ հաճոյք կը զգանք : Երբեմն ակումբին անդամները ձիւնին վրայ վազելու կամ ցատկելու մէջ կը մրցին իրարու հետ, բայց այս պատկերին մէջ պարզապէս կը քայլեն իրարու ետևէ : Կ'երևի թէ ամէն ալ նման հանդերձ հագած են, և հաւանօրէն ակումբը իր յատուկ համազգեստն ունի :

ԵՐԿՈՒ ՃԱՄԲԱՆԵՐ

Շատ անգամ կը կայնինք այնպիսի տեղ մը ուր կը թուի թէ ճամբաները

լու, թէպէտ արցունքով փնտուեց : Այսպէս կը պատահի ուրիշ շատերու ալ : Կը կարծեն թէ կրնան ծուռ ճամբու մէջ մտնել և դարձեալ ուղիղ ճամբան մտնել : Բայց կը սխալին : Եթէ անգամ մը քայլեն վար իջնող ճամբուն վրայէն, կրնայ ըլլալ որ երբեք կարող չըլլան ետ դառնալ :

Մեր ամէն մէկուն ընելու մեծ և կարևոր բանն է շիտակ գործ կատարել այսօր : Ճիշդ ուր որ գտնուինք, կայ բռնելու շիտակ ճամբայ մը, ընելու շիտակ գործ մը : Մենք կարող ընել հիմա ինչ որ կրնայինք ընել ասկէ առաջ : Երէկուան պատեհութիւնը անցած է . վաղուան պատեհութիւնը եկած չէ : Այսօրուան պատեհութիւնը մեր ձեռքն է, և պէտք է այնպէս գործածել զայն, որ կարող ըլլանք ուրախութեամբ տալ մեր հաշիւը : Ի՞նչ իմաստութիւն ըրած կ'ըլլանք եթէ այսօր, կեանքին առաւօտը, կատարենք Աստուծոյ մեղի յանձնած գործը, և մանկութեան, երիտասարդութեան և այրութեան հասակներուն մէջ բոլոր ժամանակներուն և բոլոր տեղերուն մէջ շիտակ ճամբան բռնենք, որպէս զի մեր երկրաւոր կեանքերը լեցուին օրհնութեամբ և վերջապէս հասնինք երկնային տունը խաղաղութեամբ :

ԲԱՐԻ ՄԱՅՐ ՄԸ

Ո՛վ գիտէ մօր մը արժէքը, մօր մը՝ որ կը հսկէ մանկութեան մէջ մարդոց փոքրիկ սուքերուն վրայ, որ կ'օգնէ դժուար տեղերէ անցնելու, որ կ'առաջնորդէ, կը մխիթարէ և կ'օրհնէ, և որ կը սիրէ այնպէս ինչպէս մայր մը միայն կրնայ սիրել : Կան տղաք որ երբեք փորձը առած չեն թէ ի՞նչ է բարի մայր մը : Կը յիշենք փոքրիկ տղայ մը որ գրեթէ ամէն մարդու կ'երթար առանց քաշուելու, բայց երբ կին մը անոր մօտ կու գար, կը սկսէր լալ : Ասկէ կը հասկնայինք թէ տղան ի՞նչ տեսակ մայր ունէր :

Կան մարդիկ որոնք երբ միտքերնին կու գայ իրենց մայրը կամ հայրը, միտքերնին կու գայ նաև չարութիւն կամ գինեմոլութիւն, անարգութիւն և տառապանք : Կան ուրիշներ որոնք երբեք չեն ճանչցած մօր զէմքը կամ մօր մը սէրը : Բայց շատ տղաքներ ու աղջիկներ ունին մայրեր և աղէկ մայրեր ալ . մայրեր՝ որոնք հոգ կը



ՁԻՆԱԿՕՇԿԻ ԱՎՈՒՄԻ

Ակումբն է ընկերութիւն մը որ կըրնայ կազմուիլ զանազան նպատակներու համար : Այս անունը հոս ընդհանրապէս կը նշանակէ ընկերութիւն որ ունի յատուկ տեղ մը ուր անդամները կը ժողովին և կը պարապին նորոգալու, խաղեր խաղալու կամ խօսակցելու : Բայց կան նաև թիախարու ակումբներ, լողալու ակումբներ, և մարմնամարզական և գրական ակումբներ . և Քանատայի, Նորվեկիոյ և քանի մը ուրիշ ցուրտ երկիրներու մէջ կան ձիւնակօշիկ ակումբներ : Այս տեսակ գրեթէ ամէն գրասանք աւելի հաճելի կու գայ երբ ընկերներու հետ կը վայելուի : Մենք ընկերական էակներ ենք և բնապէս կը փնտուենք ու

կը բաժնուին : Մէկը կ'երթայ աջ և մէկը՝ ձախ : Տարբերութիւնը չնչին բան մըն է, կամ կ'երևնայ թէ քիչ մը անդին ճամբաները նորէն պիտի միանան : Բայց այնպէս չէ : Անոնց մէկը վեր կ'ելլէ, միւսը վար կ'իջնէ . և շատ անգամ կը տեսնուի որ անկարելի է մէկէն միւսին անցնիլ, և ա՛լ հնար չէ ետ դառնալ առջի քայլերուն և փոխել ընթացքը : Անգամ մը եղած ընտրութիւնը կրնայ ըլլալ որ բոլոր ժամանակին համար եղած ըլլայ, և ոչ միայն ժամանակին համար, այլ՝ յաւիտենականութեան համար ալ :

Եսաւ ծախելը իր անդրանկութեան իրաւունքը : Շատ ուրախ կ'ըլլար եթէ նորէն ետ առնէր զանկա . բայց ոչ, կերպ մը չգտաւ փոփոխութիւնն ընելու :

տանին անոնց, կը հսկեն անոնց վրայ, կը խրատեն և կը յորդորեն զանոնք, որոնք կը կարկտեն և կը նորոգեն անոնց հանդերձները, կը նորոգեն նաև անոնց բարքերը, որոնք փափկասիրտ են բայց հաստատամիտ ալ, որոնք կ'ազօթեն իրենց զաւակներուն համար, և որոնք երբեմն կը յանդիմանեն մինչ տակաւին յոյս կայ, և անոնց համար աւելի բաներ կ'ընեն քան ու է մէկը որ երբեք խորհած կամ կարող եղած է:

Շնորհակալ ըլլանք Աստուծոյ բարի մայրերուն համար: Յիշենք թէ շատ հաւանական է որ բարի տղաք ուրախ, երջանիկ մայրեր և անհնազանդ տղաք հաւանական է որ տխուր, փտացած և կտորած սրտով մայրեր կ'ունենան: Թող տղաք նային որ իրենց մայրերը երիտասարդ, թարմ և զօրաւոր պահեն. թող նային որ զանոնք չյոգնեցընեն, չմաշեցնեն, չհիւանդացնեն, չտխրեցնեն և չնիհարցնեն իրենց վրայ հսկելու և իրենց համար հոգ ընելու պատճառաւ: Մայրերը արդէն կրելու շատ նեղութիւններ ունին թէպէտ իրենց զաւակներուն վարքին համար վշտանալու պատճառ չունենան ալ: Այն տղաք որ իմաստուն են և շնորհակալու սիրտ կը կրեն դէպ իրենց մայրերը, որ բոլոր կարողութիւնով կ'օգնեն անոնց, տարիներ ետքը պիտի տեսնեն թէ իրենց այդ բարի վարմունքին փոխարէն հազարապատիկ վարձք ընդունած են:




ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀՆԻԿՆԵՐՈՒ ԹԱՂՈՒՄԸ


Կանուխ կամ ուշ ամէն մարդու կեանքի մէջ կու գայ ժամանակ երբ հոգին պարտի թողուլ մարմինը և միտնել նոր և անծանօթ վիճակի մէջ: Վայ այն մարդուն որուն միակ մտածումն եղած է իր մարմինը զարդարել և ախորժակները յագեցնել: Նա կը կորսնցնէ ամէն բան, մինչ այն ուրուն մեծ ջանքը եղած է գեղեցկացընել իր հոգին, և զանիկա սուրբ և սիրելի ընել, իր բոլոր գանձերը հետը կը տանի: Բայց ի՞նչ ընելու է մարմինը զոր հոգին ետևը կը թողու: Նախ նի իգիպտացիք կը զմուսէին զայն և դիմացկուն չէնքը պատրաստելով անոնց մէջ կը դնէին, վասն զի իրենց կրօնքը կը սորվեցնէր թէ հոգիին երջանկութիւնը մարմին պահուելէն կախեալ է: Յոյները և Հռոմայեցիները երբեմն կը թաղէին և երբեմն կ'այրէին իրենց մեռելներուն մարմինները: Եթէ մարմինը չթաղուած մնար, մեծ չարիք կը նկատուէր, վասն զի կը

հաւատային թէ հոգին կը թափառէր և չէր կրնար հոգիներուն բնակարանը տարուել: Երբ մարմինը կ'այրուէր, մեռնողին ամենէն մտա ազգականը կու տար փայտակոյտին կրակը և շատ անգամ անուշահոտ նիւթեր և խնկեղէններ կը նետուէին բոցերուն մէջ: Փարսիները, այսինքն Հնդկաստանի կրակապաշտները, մեռնողին մարմինը կը դնեն զագաթն աշտարակի մը որ կը կրուի Լուսնի թաւարակ, ուր անգղերը շուտով կ'ուտեն միւսը և կը թողուն միայն սակորները, որոնք վարը գտնուող փոսի մը մէջ կը թափին:

Այս պատկերը կը ցուցնէ Ամերիկ



եան Հնդիկներուն մեռել թաղելու կերպը: Մարմինը աղէկ մը կը փաթթուի կտաններով, յետոյ կը դրուի բարձր դիրքով տեղ մը ուր գայլերը չեն կրնար հասնիլ: Մահմետական և քրիստոնէայ ազգերը մարմինը մեծաբանքով կը թաղեն, թէպէտ առողջապահութեան նկատումներով գերեզմանատունները քիչ մը հեռի կը գտնուին քաղաքներէ և ողջերու բնակութիւններէ, և շատ անգամ գեղեցկապէս զարդարուած կ'ըլլան: Գիսկիզութիւնը, այսինքն մեռելին մարմինը այրելու սովորութիւնը, տակաւին ընդհանրացած չէ, բայց քրիստոնէայ երկիրներու մէջ առաջուրն տեսիլ կը դործադրուի: Մենք կը հաւատանք թէ Աստուծոյ սուրբերուն մարմինները, թաղուին կամ այրուին, փառաւորապէս յարութիւն պիտի առնեն:



ՀՐԱՆՏ Ի ՆՁԷՍ ԼՈՒՇԵՑ ՎՐԷԺԸ

«Գուն վախկոտ ես»: Այսպիսի խօսքէ մը հաւանօրէն ամէն դպրոցական տղայ բարկութեան կը գրգռուի և դուցէ իսկոյն յարձակի ըսողին վրայ և պատուատուի բռունցով զարնել: «Այո, անշուշտ վախկոտ ես, եթէ վախկոտ չըլլայիր պիտի չխոստովանէիր թէ ծերուկ Մարթային կառքը կործանող խումբէն ես», և խաղ, դպրոցին ախոյեանը, այս կծու խօսքերը խօսած միջոցին յօնքերը կ'ընկնէր ծուռ ծուռ կը նայէր փափկակազմ, նիհար երկայնահասակ պատանիին, Հրանտի, վրայ որ թէպէտ վշտացած բայց հանդարտ

կայնած էր գնդախաղի գետնին վրայ: «Թերևս վախկոտ եմ», պատասխանեց, «բայց ես առած չեմ ծեր կնոջ խնձորներէն հատ մը անգամ»: Հրանտի վրայ աւելի համարձակութիւն գալով շարունակեց, «Ոչ, կատակը ուրիշ բան է, և աղքատիկ կնոջ մը խնձորները յափշտակելը ուրիշ բան»: «Քու գլուխդ կը ջախջախեմ, եթէ նորէն ըսես առ բանը», գոռաց խաղ, բարկութենէն կրակ կտրած ու կարմրած, խորհելով թէ անարգուած կ'ըլլար միւս տղոց առջև: Բայց Հրանտ որ էր հալածիչէն թեթեւ էր ոտքով, արդէն վազած հեռացած էր դաշտին միւս ծայրը:

Այս ատեն մտի ճամբէն մարդոց և կիներու աղաղակներ և ճիչեր կը լսուէին, և տղաքը դէպ ի գնդախաղի հրապարակին ցած պատը կը վազէին: Ճամբուն վարի կողմէն սուկայի կա-

տաղութեամբ կը վազէր խենդ ցուլ մը, ետևէն ալ մարդոց և տղոց բազմութիւն մը բաւական հեռուանց : Յուլը երբ տեսաւ տղաքը պատին վրայ ելած՝ ուշադրութիւնը դրաւուեցաւ, և բառաչելով անոնց կողմը դարձաւ և սկսաւ կատարաբար վազել դէպ ի պատը : Տղաքը պատէն վար ցատկելով ամէն կողմ ցրուեցան երբ կենդանին իրենց կողմը կը վազէր ինչպիսիք ելելով, և ահա ոտքերը իրարու զարնուելուն պատճառաւ երկվայրկեան մը կանգ առաւ . իսկ ամբողջ կը փախչէր :

Այս շփոթութեան մէջ մէկը դիտած չէր որ խաղ փաստած էր ոտքին կոճը (թիֆ) պատէն վար ցատկած ատենը, և մեծ դժուարութեամբ կը ջանար ծածկել ինքզինք գնդախաղի հրապարակին մէջ գտնուած փոքրիկ ծառերուն ետևը պահուելով :

Յանկարծ տեսաւ զանիկա կատաղի կենդանին, և սոսկալի ձայնով բառաչեց ու դարձաւ անոր կողմը : Խեղճ խաղ, գրեթէ կը մեռնէր վախէն և ցաւէն, աշխատեցաւ ինքզինք ազատել ցուլին կատաղի յարձակումէն, ծառի մը ետև ապաստանել փորձելով : Բայց վրցաւ և սկսաւ Օգնութիւն ճշել, մինչ ամբողջը և տղաքը գրեթէ անդամալոյծ եղած էին, և կարող չէին խորհիլ ցուլին ուշադրութիւնը դարձնելու միջոց մը : Ամենուր ալ շունչերը բռնուած էին վախէն, և ահա փոքրիկ շունտ աղաղակ մը հանելով ցուլին առջևն ելաւ և գնդակ մը նետեց շտակ անոր ճակատին : «Նո՛ւ եկուր, ե՛տ եկուր, հիմա կը սպաննէքե՛ղ» պոռացին :

Բայց շունտ վախկոտ չէր հիմա : Ոտքի զօրաւոր հարուածով մը գնդակը նետեց ցուլին երեսին երբ սա կը պատրաստուէր շարժուող խաղին վրայ վազել : Յուլը գնդակին անակնկալ հարուածէն շփոթեցաւ և իր կոյր կատաղութեամբ ինկաւ գնդակին ետևէն, որ իր գլխէն մէկդի անդրադարձուած կը գլորէր կ'երթար, նոր թշնամի մը կարծելով զանիկա և գնաց վայրագաբար խեթկեց գնդակը գլխովը և եղջիւրներովը և այսպէս շուտով հրապարակին միւս ծայրը հասաւ : Տղաքը այդ միջոցին կ'աշխատէին սաստիկ ահաբեկած խաղը պատին վրայ հանել և իրենք ալ կ'ելլէին աճապարանքով, և ահա հրացան կողը երկու մարդիկ երեցան :

Յուլը քիչ մը կայնեցաւ շունչ առնելու, և իր չորս կողմը կը նայէր իբր թէ չգիտնալով ինչ ընելէքը : Բայց որոշում մը ընելու չափ ատեն չունե-

ցաւ, վասն զի երկու սաստիկ ձայներ հնչեցին օդին մէջ և ցուլը գետին տապալեցաւ, յետոյ ելաւ ցաւէն և բարկութեանէն դուրսով, բայց երբ ուրիշ ձայն մըն ալ արձագանգ տուաւ դպրոցին պատէն, նորէն ինկաւ գետին, այս անգամ գնտակ մը ընդունած ըլլալով սրտին մէջ :

«Կեցցէ՛ շրանտ», գոչեցին տղաքը երբ սպաննուած ցուլին բողբոջը հաւաքուեցան, մինչ խաղ արտասուալից աչքերով և խեղդուկ ձայնով շրանտէ ներում կը խնդրէր զանիկա վախկոտ կոչելուն համար :

«Ցուլին հետ կուռի՛ր գնդակով մը», կ'աղաղակէին ամէնքն ալ. «Ինչո՞ւ չըրանտէ զատ ուրիշ մէկը խելք չըբաւ այս բանը» : «Չեմ գիտեր ինչո՞ւ այդպէս ըրի», ըսաւ շրանտ, կարմրելով միւս տղոց տուած դողեստներուն համար, «բայց մտածեցի թէ գնտակ մը նետելով թերևս կատղած ցուլին ուշադրութիւնը դարձնեմ խաղէն» :

«Կեցցէ՛ շրանտ», նորէն աղաղակեցին ամէնքն ալ, և շրանտ չէր կըրնար չխորհիլ թէ վերջապէս լուծած էր վրէժը այն տղէն որ վախկոտ կուր չած էր զինքը :



ՇՈՒԿԵՊՈՐԾԻՒՆ ՀՆԱՐԻՉԸ

Ճէյմս Ուալթս Ժնաւ 1736ին Սկովտիոյ կրինոք փոքր քաղաքը : Տկարակազմ, փափուկ պզտիկ բան մըն էր, և ասոր համար մայրը անոր կարգաւ սորվեցուց տան մէջ, հայրն ալ քիչ մը գրել և թուաբանութիւն : Վեց տարեկան եղած ատենը կը խաղար գունաւոր կաւիճով մեքենական գիծեր քաշելով կրակարանին վրայ : Իր սիրելի խաղերէն մէկն էր իր խաղաղիկները իրարմէ դատել և նորէն իրար բերել տարբեր բաներ շինելու համար : Ճշմարտախօս, հնազանդ և մանաւանդ անձնանուէր էր իր մօրը :

Երբ բաւական մեծցաւ, դպրոց դրկուեցաւ, բայց որովհետև զգայուն և զգուշաւոր էր, շատ անհանգիստ կ'ըլլար դպրոցի բիրտ և անխորհուրդ տղոց մէջ : Երբ տասնչորս տարեկան եղաւ, նկատուեցաւ, բայց բարեկամները որոնց հետ կը բնակէր, շուտով հօրը գրեցին որ գայ և առնէ զանիկա, վասն զի շատ մը այնպիսի գուարճալի պատմութիւններ կ'ընէր որ իրենց ընտանիքը չէր կրնար կանուխ անկողին երթալ :

Իր հօրաքոյրը պատմած է թէ Ճէյմս երբեմն ժամ մը կը նստէր թէյի սանին քով մինչ շուրթ կ'եռար անոր մէջ,

կափարիչը կը հանէր, և առաջ գաւաթ մը, յետոյ արծաթ դգալ մը կը բռնէր սանին վրայ, կը դիտէր շոգիին ելլելը սանին կտուցէն և գաւաթին և դգալին փակչելով խտանալը և շուրթ կաթիլներու փոխուիլը :


Տասնըհինգ տարեկան չեղած՝ բնագիտութիւն մը ծայրէ ծայր կարգաչած էր երկու անգամ, և շատ մը ուրիշ գիրքեր ալ որչափ կրցած էր ձեռք բերել : Մեքենաներ կը հնարէր : Հնարեց գործիք մը, որով կը շինէր փոքրիկ անուորդներ, ճախարակներ և ջրհաններ :

Ստիպուած էր իր պարուտը ինք ճարտէր : Երբ տասնութ տարեկան եղաւ, նորէն նկատու գնաց մաթեմատիքական գործիքներ շինելու արհեստը սորվելու համար : Իրիկունները տուած էր խաղերէն, գերմաներէն և իրաժշտութիւն սորվելու, և քիչ ետքը ընտիր երգչհան մը շինեց :

1758ին սկսաւ շոգին իբրև մղիչ գրութիւն գործածելու փորձեր կատարել, և շատ մը փորձերէ ետքը առաջին շոգեչարտ մեքենան շինեց վեց ամիս աշխատելով : Բայց զլանը, որովհետև աղէկ ձուլուած չէր, գրեթէ անպիտան եղաւ : Միտոցը, թէպէտ փաթթուած էր սունկով, իւզոտ քուրջերով և հին գլխարկով մը, օդը ներս կ'անցընէր և շոգին դուրս կը հանէր : այս ալ անպիտան ըլլալով պարապ ելաւ բոլոր աշխատութիւնը :

Ուալթս շատ աղքատ ըլլալուն համար կարող չեղաւ իր գիւտին փորձերը շարունակել, և քիչ մնաց բոլորովին պիտի թողուր զայն եթէ Մէթիու Պուլթըն, հարուստ տարազագործը, ձեռք չըռնէր տագնապած հնարիչին : Այս հարուստ անձին օգնութեան շնորհիւ վերջապէս գլուխ ելաւ մեքենային շինութիւնը : Եւ այն բաները որոնք Ուալթս արգելքներ կը համարէր, թերևս աւելի օգնեցին իր յաջողութեանը :

Ճէյմս Ուալթսի մէկ հոյակապ արձանը կը կանգնի Լոնտոն, Ուէսթմինսթըրի Աբբայարանին մէջ : Ուրիշ տեղեր ալ կանգնուած են անոր փրատակարաններ : Բայց թերևս ամենաշատը յատակարաններն են, որոնք մեքենաները որ երկիրներու մէջէն



Աւերիկայի Մեխանիկ Կողմէն, Արածուս, Տնօրէն—Խորհուրդ, Տնօրէնըրը Եղուշու : Ամերիկայի խան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՂԻՍ
 Ի ՅԱՐԱՆԻ Ա. ՅԱՅՈՐ ԳՅԱՆՁԱՆԻ